

Ուղեցույց

Արտահանողի զարգացման դրամաշնորհներ



«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ 5Ա, ԵՐԵՎԱՆ 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌԱԽՈՍ: +374 12 54 16 45
ԷԼ.ՀԱՍՑԵ: INFO@SMEDNC.AM • [HTTP://WWW.SMEDNC.AM](http://WWW.SMEDNC.AM)

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ՆՊԱՏԱԿ	6
3. ԽՆԴԻՐ	6
4. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	6
5. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ	9
6. ՍՐՅՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	10
7. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	14
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	15
9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	17
10. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	19
11. ԳՆՈՒՄՆԵՐ	20
12. ԳԱՂՏԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՒՍԱՓՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԻՑ	20
13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	21
Հավելված 1.	22
Ընկերության պաշտոնական ձևաթղթի վրա.....	22
Հավելված 1. Դիմում-հայտարարագիր	22
Հավելված 2: Հայտաձև.....	23
Հավելված 3: Համաֆինանսավորում տրամադրելու մասին հայտարարագիր	27
Հավելված 4. Բիզնես մոդելի ձևանմուշ	28
Հավելված 5. Ծրագրի բյուջե*	1
Հավելված 6. Վճարման պահանջագիր	3
Հավելված 7. Միջանկյալ/վերջնական նկարագրողական հաշվետվություններ	4
Հավելված 9. Ծախսերի մանրամասն ցուցակ (տես՝ կից excel փաստաթուղթը)	11
Հավելված 10. Ապրանքների և ծառայությունների «Բացառված ծախսերի» Համաշխարհային քանկի ցանկը.....	11
Հավելված 11. Փոձագետների, գնահատող հանձնաժողովի անդամների և հայտերի գնահատման և Ծրագրերի իրականացման արդյունքների գնահատման աշխատանքներին masnacic այլ անձանց համար.....	13
Գաղտնիության և շահերի բախումներից խուսափման հայտարարության նմուշ	13

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՀԲ	Համաշխարհային բանկ
ԱԽՈԵ	Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր
ԱԶԴ	Արտահանողի զարգացման դրամաշնորհներ
ԷՆ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
ԾԻՎ	ՀՀ Ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման վարչություն
ՆԱԿ	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ԱՔՌԱ	ԱՔՌԱ վարկային բյուրո
ԱՇ	Արժեշղթա
ՁԵՑ	Ձեռնարկությունների եվրոպական ցանց
ՀՀԴ	Հայկական դրամ

Արտահանողի զարգացման դրամաշնորհների ուղեցույցը նկարագրում է ծրագրի նպատակները, խնդիրները, մասնակցության չափանիշները, դրամաշնորհների չափը, թույլատրելի ծախսերը, մրցակցության կարգը, հայտի գնահատման գործընթացը, ինչպես նաև դրամաշնորհների կառավարման պահանջները

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի կողմից (ՀԲ) ֆինանսավորվող և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից (ԷՆ) համակարգվող «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի/Trade Promotion and Quality Infrastructure Project» (2014-2019) (ԱԽՈԵ/TPQI) «Ներդրումների և արտահանման խթանում» 2-րդ բաղադրիչի «Արտահանողի զարգացման դրամաշնորհներ/Exporter Developments Grants» (ԱԶԴ/EDG) ենթածրագրի իրականացնող գործակալությունն է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը (նախկին՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ (ՓՄՁ ԶԱԿ)) (այսուհետ՝ ԻԳ):

ԱԶԴ միջոցով աջակցություն կցուցաբերվի արտահանման ուղղվածություն ունեցող տեղական ՓՄՁ-ներին՝ ներազդելով արտաքին առևտրի և մասնավոր հատվածի զարգացման վրա:

Հայաստանում ՓՄՁ զարգացման էական խոչընդոտներից մեկը Ֆինանսների հասանելիությունն է, հատկապես մեկնարկի և աճի փուլերում գտնվող ՓՄՁ-ների համար: Առևտրային բանկերում կամ վարկային կազմակերպություններում բիզնես վարկի իրավունք ստանալու չափանիշները գրեթե միշտ ներառում են գրավադրման մեծ պահանջ և հուսալի վարկային պատմություն: Բացի այդ, մասնակցային ֆինանսավորման մեխանիզմների և բաց աղբյուրի ֆոնդային միջոցների բացակայությունը, որոնք գրավադրման պահանջներ չունեն, իրենց հերթին նույնպես սահմանափակում են ընկերություններին ներդրումներ կատարել:

Փաստացիորեն, առկա է ՓՄՁ-ների ստվար զանգված, որն ունի աճի և արտահանման ներուժ, բայց բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից չի համարվում կենսունակ, և չի թիրախավորվում համապատասխան վարկավորման գործիքներով: Այնուամենայնիվ, ԻԳ-ի փորձը ցույց է տալիս, որ եթե փոքր ընկերություններին ցուցաբերվում է նպատակային աջակցություն, ինչը, սովորաբար, վարկերի և դրամաշնորհային միջոցների համադրումն է տեխնիկական աջակցության հետ, փոքր ընկերությունները ցույց են տալիս կենսունակության բարձր մակարդակ և զարգացնում են աճի կարողությունները:

2018 թ. ՓՄՁ հարցումը, որն անց էր կացվում Միջազգային առևտրի կենտրոնի կողմից իրականացվող «Պատրաստ է առևտրի. EU4Business նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում ԻԳ-ի կողմից, ցույց տվեց, որ ընկերությունների մեծ մասը չի համապատասխանում միջազգային շուկայի պահանջներին: Հիմնական թույլ կողմերն են՝ որակի կառավարման համապատասխան սերտիֆիկացման բացակայությունը, անկայուն և անբավարար հումքի մատակարարումը և ցածր որակը, թույլ կարողությունները, ավտոմատացման և ժամանակակից տեխնոլոգիաների բացակայությունը, ընկերությունների սահմանափակ ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև շուկայի մասին տեղեկատվության

պակասը: Արտահանման և վաճառքի ռազմավարության բացակայությունը և գործարար կապերը այլ հիմնական սահմանափակումներ են:

Բացի այդ, իր գյուղատնտեսական նոր ռազմավարության շրջանակներում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մեծածախ շուկայի համակարգի զարգացումը սահմանել է որպես գյուղատնտեսության ոլորտի հիմնական առաջնահերթություն: Մեծածախ շուկայի համակարգը մեկ կամ մի քանի «բիզնես» (ներ)ի կամ կազմակերպության(ների) համակարգ է, որն ակտիվորեն ղեկավարում է առաջնային աղբյուրից հայտնաբերված սննդամթերքի համախմբումը, բաշխումը և մարքեթինգը հիմնականում տեղական և տարածաշրջանային արտադրողներից՝ նպատակ ունենալով ուժեղացնել նրանց կարողությունը բավարարելու մեծածախ, մանրածախ և ինստիտուցիոնալ պահանջարկը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:¹ Մեծածախ շուկայի համակարգի զարգացումը նպատակ ունի հաղթահարել ենթակառուցվածքային մարտահրավերները՝ Հայաստանի արտահանումը զլոբալ առումով ընդլայնելու համար, միևնույն ժամանակ աջակցելով ներքին մեծածախ և մանրածախ շուկաների զարգացմանը: Մեծածախ շուկայի հանգույցը տրամադրում է լավ նախագծված տվյալների հարթակներ, լոգիստիկա և/կամ տեղափոխման ծառայություններ, որոնք կօգնեն ստեղծել ավելի ուժեղ կապեր արտադրողների և շուկաների միջև:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ներկայումս մշակում է մեծածախ շուկայի էկոհամակարգի կառուցման ռազմավարությունը, որը կավարտվի 2020թ. առաջին եռամսյակում: Քանի դեռ ռազմավարության մշակումը գտնվում է ընթացքում, սույն նախաձեռնությունը (Արտահանողի զարգացման դրամաշնորհները) համահունչ է նշված ռազմավարության հետ և մեծապես կնպաստի տեղական ՓՄՁ-ների աճին և կարող է խթանել արտաքին առևտուրը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նշված խնդիրների լուծումը թիրախավորում է արտահանողի զարգացման դրամաշնորհների սխեմայի միջոցով, որը նպատակաուղղված է խթանել ՓՄՁ-ների մրցունակությունը միջազգային մակարդակում, նպաստելով աճին և զբաղվածությանը՝ հետևյալ հիմնական հիմնախնդիրների լուծման միջոցով.

- **Լոգիստիկա և մատակարարման ցանցեր.** արտադրության, գործառնությունների, գույքի արդյունավետ կառավարման, ինչպես նաև ներգնա/արտագնա և ներքին լոգիստիկայի զարգացում:
- **Արտահանման մարքեթինգի.** տարբերակված առանձնահատկություններով մարքեթինգի, բրենդինգի, նորարարական ապրանքների/ծառայությունների և փաթեթավորման ձևավորման ծառայությունների զարգացում:
- **Տեխնիկական/որակի պահանջներին համապատասխանեցում.** համապատասխանել ստանդարտներին, տեխնիկական կանոնակարգերին և սանիտարական նորմերին, ձեռք բերել միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկացում:
- **Տեղական համագործակցության խթանում.** ստեղծել համագործակցության մեխանիզմ արժեշոքայի փոքր մատակարարների միջև՝ արտադրությունը մասշտաբային դարձնելու և կայուն մատակարարումներ առաջարկելու համար:
- **Շուկայական կապերի խթանում.** ստեղծել համապատասխան մատակարարման ուղիներ և մոդելներ՝ օտարերկրյա շուկաներ մուտք գործելու համար և զարգացնել

¹ Միացյալ Նահանգների գյուղատնտեսության նախարարություն

գործընկերությունը արտասահմանյան ընկերությունների հետ՝ նրանց մատակարարման շղթայի մաս դառնալու համար:

2. ՆՊԱՏԱԿ

Արտահանողների զարգացման դրամաշնորհների (այսուհետ՝ ԱԶԴ) համընդհանուր նպատակը **համատեղ օգտագործման ռեսուրս կենտրոնների ստեղծումն է** (լոգիստիկ կենտրոններ, տրանսպորտային միջոցներ, մարքեթինգի ծառայություններ, արտադրական հանգույցներ և այլն) ՓՄՁ-ների հզորացման նպատակով՝ խթանելով ՓՄՁ-ների արտադրական, առևտրի և արտահանման կարողությունները:

3. ԽՆԴԻՐ

ԱԶԴ-ի խնդիրն աճի և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների կարողությունների զարգացումն է՝ արտադրության և արտահանման արժեշղթայի առկա խնդիրները լուծելու միջոցով:

4. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԴ-ն նախատեսված է համապատասխան դիմորդներին դրամաշնորհների ձևով ֆինանսական աջակցություն տրամադրելու՝ աջակցելով լավագույն առաջարկությունների իրականացմանը:

4.1. Թիրախային ոլորտներն ու գործողությունները

Այս մրցույթը բաց է ցանկացած ոլորտի համար, որտեղ առկա է արտահանման բարձր ներուժ՝ առաջնահերթությունը տալով *գյուղատնտեսությանը, սննդի վերամշակմանը և տեքստիլին:*

Այս դրամաշնորհի համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը փնտրում է փոքր և միջին ձևերի կարևորություններ՝ ուղղակիորեն մեծածախ շուկա կամ օժանդակ ծառայություններ ստեղծելու համար, որոնք կաջակցեն առկա կամ նոր մեծածախ շուկա կամ շուկայից ապրանքների շարժի դյուրինացմանը: Նշված նպատակին հասնելու համար, հետևյալ հիմնական ուղղությունները կարող են ֆինանսավորվել դրամաշնորհի միջոցով:

- Մեծածախ շուկայի մեխանիզմ.
 - *Մեծածախ շուկայի ֆիզիկական տարածք կամ բազմաբնույթ նշանակության ունիվերսալ սրահ*
 - *Մեծածախ շուկայի գործառնություններ, ներառյալ նյութերի, սարքավորումների կամ թվային տեխնոլոգիաների ձեռքբերում՝ ապրանքների համախմբման, տեսակավորման/կշռման, դասակարգման, տեսակավորման, փաթեթավորման, դասավորման, որակի ապահովման և պահեստավորման համար: Կախված հաստատության պահանջներից՝ կարող է անհրաժեշտ լինել. բեռները հետևելու համակարգեր, ավտոմատացում, բեռնման համակարգեր, սառնարաններ ամբարձիչ բեռնատարներ, ռադիոհաճախականության նույնականացման (RFID) պահեստի հսկողության և մատակարարման համակարգչային համակարգեր,*
 - *Համատեղ մշակման կամ վերամշակման կենտրոններ,*
- Հավաքման/համախմբման կետեր
- Պահեստներ
- Տրանսպորտային և լոգիստիկ ծառայություններ
- Սառնարանային տնտեսություններ և լոգիստիկ ծառայություններ
- Մարքեթինգային կենտրոններ՝ ապրանքանիշի ձևավորում և դիզայն, փաթեթավորում և պիտակավորում
- Ֆերմերների/մատակարարների զարգացման ծրագրեր, ֆերմերների ակտիվ ներգրավում
- Արտահանման կառավարման, մարքեթինգային/խթանման կենտրոնները՝ առևտրականների և վերամշակողների հետ համագործակցության ապահովման և (կամ) ներքին և (կամ) արտահանման շուկաների հետ ուղղակի կապի հաստատման միջոցով:
- Տեխնոլոգիական հարթակներ՝ մեծածախ շուկայի մեխանիզմի գործարկման ու կառավարման համար
- Տեխնոլոգիական փոխանցման կենտրոններ
- Համատեղ օգտագործման ռեսուրս կենտրոններ

4.2. Դրամաշնորհների չափը: ԱԶԴ-ի ընդհանուր ֆոնդը կազմում է 1,800,000 ԱՄՆ դոլար: ԱԶԴ ներքո ցանկացած դրամաշնորհ պետք է ընկած լինի ընդհանուր իրավասու ծախսերի հետևյալ նվազագույն և առավելագույն շեմերի միջև.

Գյուղատնտեսության և սննդի վերամշակման համար.

- Նվազագույն գումար. 30,000,000.00 ՀՀ դրամ (62,000 ԱՄՆ դոլարին համարժեք)
- Առավելագույն գումար. 230,000,000 ՀՀ դրամ (480,000 ԱՄՆ դոլարին համարժեք)

Այլ ոլորտների համար.

- Նվազագույն գումար. 15,000,000 ՀՀ դրամ (31,000 ԱՄՆ դոլարին համարժեք)
- Առավելագույն գումար. 140,000,000.00 ՀՀ դրամ (300,000 ԱՄՆ դոլարին համարժեք)

4.3. Ֆինանսավորման չափը. այս դրամաշնորհը տրամադրում է ծրագրի իրավասու ծախսերի 70%-ի չափով ֆինանսավորում:

4.4. Համաֆինանսավորման պահանջներ և ոչ դրամական ներդրումներ

Դիմորդը պետք է ապահովի գնահատված Ծրագրի բյուջեի առնվազն 30%-ի առկայությունը որպես համաֆինանսավորում: Դրամաշնորհի կողմից կատարված ծախսերը դիտարկվում են որպես համաֆինանսավորում, եթե այն բացառապես կապված է Ծրագրի իրականացման հետ: Համաֆինանսավորումը չի ներառում շինարարության, հողերի ձեռքբերման կամ վերաբնակեցման աշխատանքներ, այդուհանդերձ, դրամաշնորհատուները կարող են ներառել այդպիսի գործողություններ իրենց Ծրագրերում՝ որպես իրենց կողմից կատարվող ոչ դրամական ներդրում: **Ոչ դրամական ներդրումները** կամ անկանխիկ ներդրումները վերաբերում են փողից բացի այն ռեսուրսներին, որոնք կարող են օժանդակել Ծրագրի իրականացմանը, ինչպես օրինակ հողը, գույքը, ապրանքները, սարքավորումները, և այլն: Եթե ոչ դրամական ներդրումները համարվեն անհրաժեշտ ԱԶԴ-ի Ծրագրերի համար, այդ ներդրումները պետք է հստակ նկարագրվեն հայտերում և բիզնես մոդելներում: Ոչ դրամական ներդրումները հայտատուների լրացուցիչ ներդրումներն են և չեն դիտարկվում որպես համաֆինանսավորման մաս:

4.5. Ծրագրի տևողությունը: Յուրաքանչյուր դրամաշնորհային Ծրագրի տևողությունը 12 ամիս է՝ սկսած Դրամաշնորհի պայմանագրի ստորագրման պահից: Ծրագրերը չեն կարող երկարաձգվել ԱԽՈԵ ծրագրի ժամկետի ավարտից հետո: Ծրագրերի տևողությունը կարող է երկարացվել հիմնավորված պատճառով՝ ԱԽՈԵ ծրագրի ժամկետի երկարաձգման պարագայում:

4.6. Պահանջվող զարգացման ծրագիրը. ԱԶԴ-ի բոլոր ծրագրերը պետք է ներկայացնեն առնվազն 12 ամսվա զարգացման պլան և դրամական հոսքերի արտացոլում: Ծրագրի գումարը պետք է ծախսվի դրամաշնորհային պայմանագրի ստորագրումից սկսած՝ 12 ամսվա ընթացքում:

5. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

5.1. Դրամաշնորհին դիմելու իրավասու լինելու համար դիմորդը (անհատական կազմակերպություն կամ կազմակերպությունների խումբ/կոնսորցիում, որը ներկայացնում է Համակարգողը) պետք է.

- i. Լինի իրավաբանական անձ՝ նվազագույնը 2 տարվա պետական գրանցմամբ,
- ii. լինի շահույթ հետապնդող,
- iii. հիմնված լինի Հայաստանի Հանրապետությունում,
- iv. ուղղակիորեն պատասխանատու լինի Ծրագրի նախապատրաստման, իրականացման և կառավարման համար, չլինի միջնորդ,
- v. կարողանա համաֆինանսավորել տվյալ Դրամաշնորհային Ծրագիրը:

Կազմակերպությունների խմբի դեպքում Համակարգողին վերաբերվում են բոլոր չափանիշները, իսկ անդամներին վերաբերվում են միայն «ii» և «iii» չափանիշները:

5.2. Դիմորդները չեն կարող մասնակցել դրամաշնորհային ընթացակարգերին, եթե.

- սնանկ են կամ ունեն կասեցված բիզնես գործունեություն, ունեն ժամկետանց պարտավորություններ հարկային մարմինների նկատմամբ հայտը ներկայացնելու ամսաթվի դրությամբ, որը կազմում է ավելի քան 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, ընդգրկված են այն գնորդների ցանկում, որոնք իրավունք չունեն մասնակցել գնումների գործընթացին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կամ գտնվում են ցանկացած նմանատիպ իրավիճակում, որը բխում է ազգային օրենսդրությունից կամ կանոնակարգերով նախատեսված նմանատիպ ընթացակարգերից,
- գտնվում են Դեբարդ (Debarred) ֆիրմաների ցանկում, որոնք առկա են սույն կայքում՝ www.worldbank.org/debar :

5.3. ԱԶԴ-ի ներքո իրավասու ծախսերը ներառում են՝

- ✓ Փոքրածավալ վերանորոգում և վերականգնում (չի կարող գերազանցել դրամաշնորհային ֆինանսավորման 10%-ը)
- ✓ Արտադրական գործընթացների արդիականացում, նոր սարքավորումների ձեռքբերում
- ✓ Հումքի և ապրանքների ձեռքբերում
- ✓ Որակի կառավարման համակարգերի ներդրում և սերտիֆիկացում
- ✓ Բյուջեում ներառված այլ վավեր ծախսեր, որոնք անմիջականորեն առնչվում են Ծրագրի իրականացման հետ և համաձայնեցվել են ԻԳ հետ: Այդ ծախսերը կարող են ներառել. շուկայի մուտքի և արտաքին ընդլայնման ռազմավարությունների մշակում, արտաքին շուկայի ուսումնասիրություն և գովազդային արշավներ և այլն, որոնք միասին չեն կարող գերազանցել ընդհանուր դրամաշնորհային ֆոնդերի 20% -ը:

- ✓ Շրջանառու կապիտալ (աշխատավարձ, կոմունալ ծախսեր, վարձակալման ծախսեր), որոնք կկատարվեն համաֆինանսավորման միջոցների հաշվին
- ✓ Հարկեր, որոնք կֆինանսավորվեն ՀՀ բյուջեի աղբյուրներից, որպես Ծրագրի համաֆինանսավորում:

5.4. ԱԶԴ-ի ներքո անթույլատրելի ծախսերը ներառում են.

- Հողի ձեռքբերում կամ վերաբնակեցում,
- Ոչ դրամական ներդրում,
- Վճարումներ կորուստների կամ ապագա հավանական պարտավորությունների դիմաց,
- Ցանկացած կողմի տոկոսներ կամ պարտքեր,
- Վարկեր երրորդ անձանց կամ ենթադրամաշնորհառուներ,
- Շենքերի կամ շինությունների ձեռք բերում,
- Վերանորոգումներ և ցանկացած այլ ծախս, որոնք կապված չեն Ծրագրի նպատակների հետ:

Այլ ոչ իրավասու ծախսերի համար, հետևեք Համաշխարհային բանկի «Բացառված ծախսեր» ցուցակին (Հավելված 10), որտեղ ներկայացված են այն ապրանքները և ծառայությունները, որոնք իրավասու չեն ֆինանսավորվել Համաշխարհային բանկի ծրագրերի ներքո:

6. ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԱԶԴ-ի մրցույթը կիրականացվի հետևյալ հաջորդական փուլերով.

- 1) Մրցույթի հայտարարություն
- 2) Հայտերի ներկայացում
- 3) Իրավասության ստուգում (նախնական ընտրություն)
- 4) Սկզբնական գնահատում անկախ փորձագետների կողմից/վերջնական գնահատում գնահատող հանձնաժողովի
- 5) Վերջնական ընտրություն և դրամաշնորհի տրամադրում:

6.1. Մրցույթի հայտարարություն և հայտերի ներկայացում

ԱԶԴ-ի մրցույթը բաց կլինի երկու ամսով և այն կհրապարակվի ԻԳ-ի և ԷՆ-ի կայքերի, այլ հանրային աղբյուրների (հեռուստատեսություն, թերթեր, ռադիո և այլն) միջոցով, ինչպես նաև կտարածվի սոցիալական ցանցերի միջոցով (ԻԳ ֆեյսբուքյան էջ և այլն):

Իրականացնող գործակալությունը կապահովի հրապարակայնությունն ու առավել լայն տարածումը, կիրականացնի տեղեկատվական միջոցառումների շարք (Հայաստանի բոլոր մարզերում)՝ ԱԶԴ ծրագրի նպատակների, դիմելու կարգի, ընտրության չափանիշների և այլ հարակից հարցերի շուրջ հնարավոր շահառուներին տեղեկացնելու նպատակով: Տեղեկատվական միջոցառումների անցկացման վայրն ու ժամանակացույցը նախապես կրապարակվեն վերոհիշյալ կապի միջոցներով:

Տեղեկատվական միջոցառումներին մասնակցելուց բացի, հավանական դիմորդները հնարավորություն կունենան հարցումներ ներկայացնել Իրականացնող Գործակալությանը՝ մինչև մրցույթի ավարտից 10 օր առաջ:

6.2 Հայտի փաթեթ

Նշված մրցույթին մասնակցելու համար Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթերի հետևյալ փաթեթը (Հայտի փաթեթ).

- Դիմում- հայտարարագիր (Հավելված 1)
- Հայտի ձև (Հավելված 2)
- Կոնսորցիումի համաձայնագիր՝ կոնսորցիումների դեպքում
- Հայտարարագիր համաֆինանսավորող միջոցների տրամադրման վերաբերյալ (Ծրագրի արժեքի առնվազն 30%-ի չափով) (Հավելված 3) հետևյալ փաստաթղթերի հետ միասին.
 1. հայտատու ընկերության վերջին 6 ամիսների բանկային քաղվածքները, որոնք ապացուցում են իրենց հաշիվներում համաֆինանսավորման համապատասխան գումարի առկայությունը,
 2. սեփականատիրոջ բանկային հաշվի բանկային քաղվածք՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայության վերաբերյալ, կամ
 3. Վարկային միջոցների հասանելիությունը հաստատող բանկային տեղեկանք:
- Բիզնես-մոդել (Հավելված 4)
- Ծրագրի բյուջե (Հավելված 5)
- Ընկերության պետական գրանցման վկայականի պատճենը
- Իրավաբանական անձի վերջին երկու տարվա հարկային հաշվետվությունների պատճենը
- Հարկային մարմիններից տեղեկանք պարտքերի վերաբերյալ
- Տեղեկանք ԱՔՌԱ-ից:

Հայտի փաթեթը պետք է ներկայացվի հայերեն լեզվով, բաղակացած 1 բնօրինակից և 2 պատճեններից: Հայտաձևը (Հավելված 2) և բիզնես մոդելը (200,000 ԱՄՆ դոլարից բարձր ծրագրերի դեպքում) (Հավելված 4) պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով:

6.3 Ուր ներկայացնել

Հայտերի փաթեթները պետք է ներկայացվեն ԻԳ-ի գրասենյակ հետևյալ էլ. հասցեով. procurement@smednc.am. Հայտատուները պետք է առարկա/subject դաշտում նշեն «ԱԶԴ-ի հայտ». Բնօրինակ փաստաթղթերի սկանավորված պատճենները ընդունելի կլինեն: Բնօրինակ փաստաթղթերը պետք է տրամադրվեն ըստ պահանջի: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը նշված է Դրամաշնորհային ծրագրի մրցույթի հայտարարության մեջ: Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն քննարկվի: Եթե հետագա մրցույթներ հայտարարվեն, հայտերը կարող են կրկին ներկայացվել:

6.4 Իրավասության չափանիշների ստուգում (նախնական գնահատում)

Հայտերի բոլոր փաթեթները կստուգվեն իրավասության չափանիշներին համապատասխանության մասով, որը ներկայացված է 6-րդ բաժնում, ինչպես նաև կստուգվի,

թե արդյոք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն են ներկայացվել մրցույթի հայտարարության պահանջներին համապատասխան, ըստ ուղեցույցի 9-րդ բաժնի:

Հայտատուները կտեղեկացվեն **թերի փաթեթների** վերաբերյալ, այսինքն՝ բացակայող փաստաթղթերի կամ այլ հիմնական տեղեկությունների բացակայության վերաբերյալ: Դիմորդը պետք է վերանայի իր Հայտը և ներկայացնի բացակայող ցանկացած փաստաթուղթ կամ այլ պահանջվող տեղեկություն՝ Իրականացնող գործակալության ծանուցումից հետո 2 օրվա ընթացքում:

6.5. Անկախ փորձագետ(ներ)ի գնահատականը

Բոլոր հայտերը կվերանայվեն և կգնահատվեն մրցակցային հիմունքներով ընտրված Կորպորատիվ ֆինանսների և բիզնեսի մասնագետի(ներ)/կազմակերպությունների կողմից: Յուրաքանչյուր հայտի գնահատման հաշվետվություն կկցվի հայտին և կներկայացվի Գնահատման հանձնաժողովին՝ հետագա գնահատման համար:

6.6. Գնահատման հանձնաժողով

Գնահատման հանձնաժողովը կձևավորվի ԷՆ-ի կողմից և բաղկացած կլինի առնվազն 5 անդամներից, ներառյալ ԷՆ-ի, ԱԽՈԵ/TPQI ծրագրի Ղեկավար հանձնաժողովի ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ:

Գնահատող հանձնաժողովի բոլոր որոշումները վերջնական են: Հանձնաժողովի անդամներն իրավունք չունեն հետադարձ կապ ապահովել կամ օժանդակություն ցուցաբերել հայտատուներին: Գնահատող հանձնաժողովը հայտերը կգնահատի ըստ սույն ուղեցույցի 6.8 կետում նշված գնահատման չափանիշների համաձայն:

Գնահատող հանձնաժողովը և Հայտերի գնահատման աշխատանքներին մասնակցող այլ անձինք կստորագրեն «Հայտարարություն գաղտնիության և շահերի բախման բացակայության վերաբերյալ» փաստաթուղթը (Հավելված 11):

6.7. Քարտուղարություն

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, որպես ԱԶԴ-ի իրականացնող գործակալություն, և որպես ԱԶԴ-ի Քարտուղարություն, պատասխանատու է Ծրագրի ամենօրյա (գործառնական) կառավարման համար: Մասնավորապես, Քարտուղարությունը վարում է սեմինարներ, իրականացնում է հանրային իրազեկման գործողություններ, ապահովում է ԱԶԴ-ի գործունեության, արդյունքների և հաջողության պատմությունների հրապարակայնությունը: Քարտուղարությունը ստուգում է հայտերի իրավունակության համապատասխանությունը սահմանված չափանիշներին, կազմակերպում է արտաքին անկախ փորձագետների (անձանց) կողմից հայտերի գնահատումը, նախապատրաստում է գնահատման հանձնաժողովի փաստաթղթերը (գնահատման հաշվետվություններ, նիստերի արձանագրություններ և այլն) և պատրաստում է ընտրված դրամաշնորհառուների հետ կնքվելիք համաձայնագրերը: Քարտուղարությունն իրագործման փուլում խորհրդատվական ծառայություններ է մատուցում նաև Ծրագրերի իրականացման ընթացքում՝ գործառնական, ընթացակարգային և փաստաթղթավորման հարցերի վերաբերյալ, պարբերաբար իրականացնում է մոնիտորինգ, հավաքում և ստուգում է ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունները, ստուգում է կանխավճարների ներկայացման պահանջագրերը և այլն:

6.8. Հայտերի գնահատում

N	Գնահատման չափանիշներ	Միավոր (1-5)*	Կշիռ	Վերջնական միավոր
1.	Առաջարկվող Ծրագրի համապատասխանությունը ԱԶԴ-ի Նպատակներին (որքանով են առաջարկվող Ծրագրի նպատակները և դրա ենթադրյալ արդյունքները համահունչ ԱԶԴ-ի ընդհանուր նպատակին, այն է՝ արտադրության աճ և արտահանման կարողությունների զարգացում) և հայտերի որակի տեխնիկական պահանջներին :	5	3	15
2.	Առաջարկվող նախագծի ազդեցությունը ամբողջ արժեզրթայի վրա, մուլտիպլիկատիվ և սիներգիայի ազդեցությունը ՓՄՁ-ների և արժեզրթայի այլ մասնակիցների վրա: Արդյոք հստակ սահմանված են նրանց կարիքները, և արդյոք առաջարկը պատշաճ կերպով վերաբերում է դրանց:	5	3	15
3.	Իրագործելիություն Որքանով է իրատեսական առաջարկվող Ծրագրի իրականացումը նախատեսված ժամկետում և նախատեսված ներդրումներով:	5	2	10
4.	Մարքեթինգային ռազմավարություն Ինչպե՞ս է առաջարկվող արտադրանքը/ծառայությունը բխում առկա շուկայի պահանջներից: Արդյո՞ք հայտատուն ունի իրատեսական ռազմավարություն և արտահանման մարքեթինգային ծրագիր (թիրախային շուկա և շուկայի հատվածավորում, մրցակցության, հաճախորդների, գնագոյացման վերլուծություն, շուկայում առաջխաղացման և տարածման ռազմավարություն և այլն):	5	2	10
5.	Իրականացման պլան Արդյո՞ք հայտատուն ունի հստակ իրականացման ծրագիր:	5	2	10
6.	Ծրագրի բյուջե Արդո՞ք առկա է ծախսերի և եկամուտների հստակ պատկերացում: Որքանով են առաջարկվող Ծրագրի ֆինանսական կանխատեսումները ճշգրիտ և ամբողջական: Որքա՞ն է առաջարկվող գործունեության շահութաբերության մակարդակը և որքանով է այն իրատեսական: (Ծախսաձածկում, շահույթ և վնաս և այլն)	5	4	20
7.	Առաջարկվող տեխնոլոգիայի և գործողությունների նորարարությունը (արդյո՞ք առաջարկվող տեխնոլոգիան նորարարարական է կամ որքանով է նորարարական)	5	2	10
8.	Ռիսկերի վերլուծություն և մեղմացման միջոցառումներ (Արդյո՞ք հայտատուն հստակ հասկանում է ռիսկերը և դրանց մեղմացման համար առաջարկվող միջոցառումները)	5	2	10
	Ընդամենը			100

Գերազանց Լավ Միջին Միջինից ցածր Անբավարար

սանդղակ

6.9. Ընտրություն և շնորհում

Բոլոր 70-ից ավել միավոր ստացած հայտերը իրավասու են ֆինանսավորման համար: Հանձնաժողովը կդասակարգի հայտերը ըստ միավորների և ֆինանսավորումը կտրամադրվի ըստ ցուցակի՝ վերնից ներքև, ընդհանուր բյուջեի համաձայն: 70-ից բարձր միավորներ ստացած, սակայն չֆինանսավորված հայտերը կմնան պահուստային ցուցակում:

6.10. Ուղղորդում

ԱԶԴ-ի գործողությունները կհամալրվեն Իրականացնող գործակալության տեխնիկական աջակցության համապարփակ գործիքակազմերով, ներառյալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (EEN) գործիքները. <https://een.ec.europa.eu/> (Ներդրումների աջակցման կենտրոնը ՁԵՑ-ի հյուրընկալող կառույցն է 2009թ. -ից):

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Պայմանագրի բանակցություններ և ստորագրում

ԻԳ-ն նամակ է ուղարկում ՀՀ ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման վարչություն կամ այն պատասխանատու մարմնին, որը սահմանված կլինի ԱԽՈԵ/TPQI-ի վարկային պայմանագրով (այսուհետ՝ պատասխանատու մարմին (ՊՄ))՝ ներկայացնելով Գնահատման հանձնաժողովի որոշումը: Հիմք ընդունելով Գնահատման հանձնաժողովի որոշումը՝ դրամաշնորհի տրամադրման եռակողմ պայմանագիր է ստորագրվում դրամաշնորհատուի (այսուհետ՝ Շահատու), ՊՄ-ի և ԻԳ-ի միջև: ԻԳ-ն պատասխանատու է Պայմանագրի կազմման համար: Պայմանագրով սահմանվում են յուրաքանչյուր կողմի դերն ու պարտականությունները, ինչպես նաև վճարման պայմանները:

Նախքան պայմանագրի կնքումը, հաջողած հայտատուները պարտավորվում են ներկայացնել ապացույց համաֆինանսավորման պահանջի (Ծրագրի թույլատրելի ծախսերի առնվազն 30%-ի չափով) կատարման վերաբերյալ՝ տրամադրելով բանկային քաղվածք, որն ապացուցում է հայտատու կազմակերպության Ծրագրի համար բացված հատուկ բանկային հաշվում համաֆինանսավորմանը համապատասխան գումարի առկայությունը:

Ծրագրի մանրամասն բյուջեն, ինչպես նաև Ծրագրի բիզնես պլանը ժամանակացույցով, կներառվեն Պայմանագրի հավելվածների հավելվածներում:

Դրամաշնորհատուների հետ կնքվող պայմանագրերը պետք է ներառեն պարտադիր դրույթ՝ Դրամաշնորհային ծրագրի աուդիտի անցկացման իրավունքի վերաբերյալ, որը կանցկացվի ՊՄ-ի կողմից ընտրված ՀԲ-ի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ ՊՄ-ի կամ ՀԲ-ի պահանջով: Դրամաշնորհային ծրագրերի հետ կապված տեղեկատվական

փաստաթղթերը և համապատասխան գրառումները պետք է հասանելի լինեն ՀԲ-ի աշխատողներին, ըստ պահանջի:

7.2. Թղթապանակ

Դրամաշնորհառուները Ծրագրի սկզբում պետք է ստեղծեն Ծրագրի թղթապանակ: Այս թղթապանակը պետք է պարունակի առնվազն հետևյալ փաստաթղթերը.

- Սույն ուղեցույցում նշված հայտը և այլ օժանդակ փաստաթղթեր,
- Ցանկացած պաշտոնական փաստաթղթեր, որոնք փոխանակվել են դրամաշնորհային հայտի ներկայացման և իրականացման ընթացքում,
- Դրամաշնորհի շնորհման վերաբերյալ գրությունը,
- Ծրագրի ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունների պատճենները,
- Բոլոր բնօրինակ հաշիվ ապրանքագրերը և այլ վճարումները հաստատող օժանդակ փաստաթղթերը:

Թղթապանակը պետք է հասանելի լինի ԻԳ-ի և ՊՄ-ի համապատասխան ներկայացուցիչներին, ինչպես նաև ՀԲ-ի և անկախ աուդիտորներին (նշանակված ՊՄ-ի կողմից)՝ ուսումնասիրության համար:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ

Իրավական բազա. ԱԽՈԵ Ծրագրի ներքո բնապահպանական և սոցիալական ուղեցույցը ներկայացված է Ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման սխեմայում (ԲՄԿՍ) և վերաբնակեցման քաղաքականության սխեմայում (ՎՔՍ), ինչի մասին նաև հղում կա Հայաստանի Կառավարության և Համաշխարհային Բանկի միջև ստորագրված ԱԽՈԵ Ծրագրի Վարկային Համաձայնագրում: Այս փաստաթղթերը Համաշխարհային Բանկի ու ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատվել և հրապարակվել են 2014թ. մարտին, և թարմացվել են [XXXX 2019/2020]: Դրանք պետք է վերաբերեն ԱԶԴ Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտներին:

Ծրագիրը կնախաձեռնի OP/BP 4.01 Բնապահպանական գնահատում, OP 4.09 վնասատուների կառավարման, և OP/BP 4.12 Բռնի վերաբնակեցումը:

Քաղաքականություն	Հիմնական պահանջների ամփոփում
OP/BP 4.01 Բնապահպանական գնահատում	Նախապես վերհանել պոտենցիալ ազդեցությունները և ընտրել համապատասխան գործիք՝ պոտենցիալ բացասական ազդեցությունները գնահատելու, մինիմալի հասցնելու և մեղմացնելու համար
OP 4.09 Վնասատուների կառավարում	Վնասատուների կառավարմանն աջակցող ինտեգրված մոտեցումներ. Վերհանել այն թունաքիմիկատները, որոնք կարող են ֆինանսավորվել Ծրագրի ներքո և մշակել վնասատուների կառավարման համապատասխան պլան, որը կներառի ռիսկերը:
OP/BP 4.12 Բռնի վերաբնակեցում	Աջակցել անձանց, կամ այն անձանց, որոնց ունեցվածքը կամ միջոցները, իրենց կենսամակարդակը բարելավելու կամ առնվազն վերականգնելու ջանքերը բացասական

	ազդեցություն են ունեցել: Հնարավորինս խուսափել վերաբնակեցումից կամ նվազագույնի հասցնել: Տեղահանված անձինք պետք է համատեղ օգտագործեն ծրագրի օգուտները:
--	--

ԱԶԴ Ծրագրի շրջանակներում, ցանկացած գործունեություն, որը կարող է մտնելո A կատեգորիայի բարձր ռիսկային B(B+) կատեգորիայի տակ, **սի կարող** իրավասու լինել ֆինանսավորման համար:

Ի լրումն ԲՄԿՄ-ում և ՎԶՄ-ում թվարկված դրույթների, դրամաշնորհառուները պատասխանատու են ազգային բնապահպանական և սոցիալական օրենսդրությանն ամբողջությամբ համապատասխանելու համար, ներառյալ թափոնների կառավարման, շինարարության, թույլտվությունների ստացման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքային պայմանների և այլնի հետ համապատասխանության համար: ԲՄԿՄ և ՎԶՄ համապատասխանության պահանջները, ինչպես նաև ազգային բնապահպանական ու սոցիալական օրենսդրությունը պետք է հստակ ձևով ձևակերպված լինի շահառուների կողմից ստորագրվող դրամաշնորհային համաձայնագրերում: Բոլոր պահանջների իրականացման համար նախատեսված բյուջեն ներառված է դրամաշնորհային ծրագրի ծախսերում:

Ստուգում. Բոլոր դրամաշնորհային գործողությունների բնապահպանական ու սոցիալական ստուգումը կտանի իրավասու ծախսերի գուման և իրավասու գործողությունները բնապահպանական B կամ C կատեգորիայի դասակարգման:

Կատեգորիա B (բնապահպանական միջին ռիսկեր) – բնապահպանության վրա միջին ազդեցություն՝ իրականացման տարածաշրջանում, անդամայինության ցածր ռիսկայնություն կամ ոչ ռիսկային: մեղմացման միջոցառումների կիրառումը իրատեսական է: EMP և մոնիտորինգի համապատասխանությունը իրականացման ընթացքում պարտադիր է:

Կատեգորիա C (նվազագույն ռիսկեր կամ բնապահպանական ռիսկեր չկան) – չնչին ազդեցություն կամ ազդեցություն չկա շրջակա միջավայրի վրա: Ստուգումից հետո որևէ գործողության կարիք չկա:

Ինչպես ներկայացված է ԲՄԿՄ Ծրագրում:

Մոնիտորինգ և հաշվետվություն. Բնապահպանական և սոցիալական ստուգման ավարտը և մոնիտորինգը պետք է իրականացվի նշանակված մասնագետի կողմից, Էկոնոմիկայի Նախարարության ՊՄ-ի, դրամաշնորհառուի ու ԻԳ համապատասխան անձնակազմի հետ սերտ համագործակցությամբ: ԲՄԿՄ ավարտը, համապատասխանությունը և պարբերաբար մոնիտորինգը կլինի Ծրագրի ներքո դրամաշնորհի օգտագործման պայման: Սա միանշանակորեն կնշվի յուրաքանչյուր դրամաշնորհային համաձայնագրում:

Ծրագրի կառավարման գրասենյակի և սոցիալական մասնագետի կողմից դրամաշնորհառուի ձեռնարկություն այցելությունը դրամաշնորհի իրականացման ընթացքում պետք է իրականացվի առնվազն 3 անգամ.

1. Ստուգման փուլում, մինչև դրամաշնորհի ֆինանսավորման գործողությունները նախաձեռնելը. Ստուգման այցելությունը պետք է իրականացվի ԲՄԿՄ նախապատրաստելու համար տեղեկատվություն հավաքելու և ծրագրի ներքո բնապահպանական ու սոցիալական պահանջների ու պարտավորությունների վերաբերյալ շահառուների իրազեկվածությունը բարձրացնելու համար:

2. Միջին ժամկետային փուլում – դրամաշնորհի իրականացումից սկսած մոտավորապես 6 ամիս հետո. Միջին ժամկետային այցելության ընթացքում ստացված տեղեկատվությունը պետք է լրացվի ԲՄԿՄ իրագործման ստուգաթերթում և պետք է ներկայացվի Համաշխարհային Բանկ և
3. Ավարտական փուլում – մինչև դրամաշնորհային գործողություններն ավարտելը. Այս այցելության արդյունքները պետք է ինտեգրվեն նաև Համաշխարհային Բանկ ներկայացվող ընթացիկ հաշվետվության հետ:

Համատեղ գործողություններ. Շահառուների այն գործողությունները, որոնք չեն ֆինանսավորվել դրամաշնորհի ներքո, բայց ուղղակիորեն և բազմանշանակ վերաբերում են դրամաշնորհի ֆինանսավորման գործողություններին, պետք է իրականացվեն դրամաշնորհի իրականացման հետ միաժամանակ և անհրաժեշտ են, որպեսզի ծրագիրը կենսունակ լինի, կդիտարկվեն որպես “համատեղ գործողություններ” և կլինեն նաև բնապահպանական ու սոցիալական ստուգման, ինչպես նաև ԲՄԿՄ-ում և ՎԶՄ-ում թվարկված դրույթների առարկա: Սա կարող է ներառել ոչ դրամական ներդրում, ինչպիսիք են բիզնես գործունեության համար անհրաժեշտ հողերի ձեռք բերում և ընդլայնում, շինարարություն և այլն:

Միջադեպի հաշվետվություն. Դրամաշնորհի շահառուները պետք է անմիջապես հաշվետվություն ներկայացնեն ԻԳ և ԾԿԳ բնապահպանական և սոցիալական մասնագետին՝ ցանկացած միջադեպի մասին, որը ծագել է դրամաշնորհի իրականացման ժամանակատվածում իրենց գործունեության իրականացման ընթացքում: Շահառուները պետք է աջակցեն ԻԳ-ին և ԾԿԳ-ին միջադեպի բացահայտման հարցում, ձեռք առնեն ուղղիչ միջոցներ, և, անհրաժեշտության դեպքում, իրականացնեն ուղղիչ միջոցառումներ:

Հանրային տեղեկատվություն և բողոքների փոխհատուցում. Դրամաշնորհի շահառուներից կպահանջվի կայքում և դրանից բխող այլ աղբյուրներում հստակ կերպով ներկայացնել ծրագրի անվանումը և ԻԳ ու ԾԿԳ կոնտակտները: Դրամաշնորհի շահառուները – ի լրումն ԻԳ և ԾԿԳ մասնագետների – ԻԳ-ից ու ԾԿԳ-ից կստանան տեղեկատվություն՝ ծրագրի բողոքների և փոխհատուցման մեխանիզմի գործողության և կառուցվածքի վերաբերյալ: Նրանից կպահանջվի արձանագրել և հաշվետվություն ներկայացնել դրամաշնորհային գործունեության հետ կապված յուրաքանչյուր բողոքի կամ հետադարձ կապի մասին և այդ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացնել ԾԿԳ-ի սոցիալական և բնապահպանական մասնագետին:

9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

9.1. Նկարագրողական և ֆինանսական ընթացիկ և վերջնական հաշվետվություններ

Դրամաշնորհառուն, համաձայն 10.2-րդ հոդվածով նախատեսված ժամանակացույցի, պետք է ներկայացնի ընթացիկ նկարագրողական և ֆինանսական հաշվետվություններ:

9.2. Դրամաշնորհային միջոցների հատկացումները

ԱԶԴ-ի միջոցների հատկացումները կատարվում են 12 ամսվա ընթացքում հետևյալ չորս հատկացումներով՝

- 1-ին հատկացում. դրամաշնորհի միջոցների 20%-ը՝ պայմանագրի ստորագրման և բանկի երաշխիքը ներկայացնելու հիման վրա (որը ուժի մեջ կլինի Ծրագրի ողջ ժամանակահատվածի ընթացքում),
- 2-րդ հատկացում. դրամաշնորհի միջոցների 30%-ը՝ 1-ին հատկացման 80%-ը ծախսելուց հետո, և համաֆինանսավորման նվազագույնը 40%-ը,
- 3-րդ հատկացում. դրամաշնորհի միջոցների 40%՝ նախորդ հատկացումների 80%-ը ծախսելուց հետո, և համաֆինանսավորման նվազագույնը 50%-ը,
- Մնացորդի հատկացում. վերջնական տեքստային և ֆինանսական հաշվետվությունները հաստատելուց հետո: Մնացորդի հատկացումը պետք է հաշվարկվի՝ հիմնվելով փաստացի ծախսերի վրա, հիմնված վերջնական նկարագրողական և ֆինանսական հաշվետվությունների վրա: Դրամաշնորհային ֆոնդերը չպետք է լինեն ավելի, քան ընդամենը իրավասու ծախսերի 70%-ը:

Եթե որոշ Ծրագրերի իրականացումը պահանջում է ավելի մեծ հատկացումներ, քան վերը նշվածը, Դրամաշնորհառուն պետք է ներկայացնի համապատասխան հիմնավորումներ:

Յուրաքանչյուր հատկացման համար (բացառությամբ 1-ի), Դրամաշնորհառուն պետք է ներկայացնի վճարման պահանջագիր (Հավելված 6), որին կցվում են նկարագրողական հաշվետվությունը (Հավելված 7), Ֆինանսական հաշվետվությունը (Հավելված 8), ծախսերի մանրամասն ցանկը (Հավելված 9) և ծախսերը հիմնավորող բոլոր օժանդակ փաստաթղթերը:

Յուրաքանչյուր հատկացումը պետք է կատարվի ՊՄ-ի կողմից Ծրագրի համար նախատեսված հատուկ բանկային հաշվին՝ Իրականացնող գործակալության և ՊՄ-ի կողմից նկարագրողական և ֆինանսական հաշվետվությունները ստուգելու և հաստատելու պարագայում, ինչպես նկարագրված է ստորև:

Սույն կետում նշված վճարման պահանջագիրը տեքստային և ֆինանսական հաշվետվություններին հետ միասին ստանալուց հետո ԻԳ-ն տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ Ստուգման ժամանակահատված) ստուգում է ծախսերի իրավասությունը և դրանց համապատասխանությունը Պայմանագրի պայմաններին: Ստուգման ժամանակահատվածում ԻԳ-ն իրականացնում է նաև այցեր, ինչպես նկարագրված է 12-րդ կետում:

Դրամաշնորհառուի անհամապատասխանության դեպքում Ստուգման ժամկետը կասեցվում է, և Դրամաշնորհառուին գրավոր տեղեկացվում է կասեցման մասին (ներառյալ՝ էլեկտրոնային հաղորդագրությունը): Ստուգման ժամանակաշրջանի գործընթացը վերսկսվում է պահանջվող փաստաթղթերը/տեղեկությունները ներկայացնելուց հետո և/կամ եթե անհամապատասխանությունն այլ կերպ վերանում է:

Ստուգման ժամանակահատվածի ավարտից հետո (3) աշխատանքային օրվա ընթացքում ԻԳ-ն ՊՄ-ի վերջնական հաստատման և դրամաշնորհային միջոցների տրամադրմանն է ուղարկում Ծանուցում հաշվետվությունների հաստատման մասին՝ կցելով հաստատված հաշվետվությունները և բոլոր օժանդակ փաստաթղթերը:

Ծանուցումը ստանալուց հետո (5) աշխատանքային օրվա ընթացքում ՊՄ-ն պետք է ստուգի փաստաթղթերը և հաստատման դեպքում կատարի վճարումը (3) աշխատանքային օրվա ընթացքում: Որևէ անհամապատասխանության դեպքում ՊՄ-ն հետ է ուղարկում փաստաթղթերի փաթեթը մեկնաբանություններով ԻԳ-ին՝ հավելյալ ուսումնասիրության համար: Այս դեպքում գործընթացը վերսկսում է վերը նշված նույն կարգով:

Ցանկացած տեսակի ոչ դրամական ներդրում, որը պետք է ներկայացվի առանձին, չի համարվում իրավասու ծախս և ենթակա չէ ստուգման:

9.4 Ծրագրի առանձին բանկային հաշիվ

Յուրաքանչյուր դրամաշնորհառու պետք է բացի ԱԶԴ-ի առանձին բանկային հաշիվ, ուր փոխանցվում են դրամաշնորհի միջոցները, ինչպես նաև սեփական ներդրումը: Դրամաշնորհառուները պետք է պաշտոնապես ներկայացնեն առանձին բանկային հաշվի տվյալները: Առանձին բանկային հաշիվը պետք է կիրառվի բացառապես Ծրագրի իրականացման նպատակների համար: Վճարումներն այդ հաշվից կարող են կատարվել բացառապես Ծրագրի շրջանակներում հաստատված թույլատրելի ծախսերի համար:

9.5 Դրամաշնորհառուները պետք է վարեն պատշաճ ֆինանսական կառավարման համակարգ և պատրաստեն Բանկի համար ընդունելի հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ: Դրամաշնորհառուների ֆինանսական կառավարման համակարգում պետք է պահպանվեն/արձանագրվեն Ծրագրի միջոցների բոլոր ստացականներն ու ծախսերը առանձին, անկախ իրենց մյուս ֆոնդերից: Նման արձանագրությունները պետք է ներառեն Ծրագրի ճշգրիտ և ամբողջական եկամուտներն և ծախսերը և պետք է ապահովվեն բավարար և համապատասխան փաստաթղթերով (ներառյալ գնումների պատվերները, հաշիվ-ապրանքագրերը, ստացականները, մատակարարի ընտրության հիմնավորումները և այլն)` Ծրագրով նախատեսված բոլոր ծախսերը հիմնավորելու նպատակով:

9.6 Ծրագրին առնչվող բոլոր ծախսերը պետք է վճարվեն մինչև Դրամաշնորհի պայմանագրի ավարտը: Այդ ամսաթվից հետո կատարված ցանկացած ծախս կհամարվի ոչ իրավասու:

9.7 Եթե Դրամաշնորհառուի փաստաթղթի իրավասու ծախսերը Ծրագրի ավարտին ավելի քիչ են, քան Դրամաշնորհային Պայմանագրում նշված գնահատված իրավասու ծախսերը, ապա դրամաշնորհը պետք է սահմանափակվի ԻԳ-ի կողմից վավերացված և ԻՍ կողմից հաստատված իրավասու ծախսերի 70%-ով:

9.8 Վերջնական գումարը գերազանցող վճարված ցանկացած գումար պետք է հետ վերադարձվի Դրամաշնորհառուների կողմից` դեբետային նոտան թողարկելուց հետո 30-օրյա ժամկետում:

10. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

10.1 ԻԳ-ն պետք է մոնիտորինգ իրականացնի` ԱԶԴ-ի իրականացման առաջընթացը գնահատելու նպատակով, ինչպես նաև հավաստիանալու, որ կատարված ծախսերը համապատասխանում են տվյալ ժամանակահատվածի Ծրագրի հաստատված բյուջեին: Մոնիտորինգի մեթոդները կներառեն.

ա/ Հերթական ֆինանսական հաշվետվությունների **փաստաթղթային ստուգում**, որի ընթացքում կստուգվեն բոլոր հարակից գործարքները` հաստատված Ծրագրի բյուջեի հետ ֆինանսական ծախսերի համապատասխանությունը ստուգելու նպատակով: Դա նաև թույլ կտա բացահայտել ոչ պատշաճ ծախսերը կամ դրանց ԱԶԴ-ի պահանջների անհամապատասխան լինելը: Փաստաթղթային ստուգման ընթացքում կստուգվեն նաև նկարագրողական հաշվետվությունները:

բ/ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում կատարված ծախսերի ֆիզիկական ուսումնասիրության նպատակով կիրականացվեն **կանոնավոր այցելություններ**, սակայն դրամաշնորհային միջոցների յուրաքանչյուր հատկացումից առաջ ոչ պակաս, քան մեկ անգամ: Այցելությունների պարբերականությունը որոշելու է ԻԳ-ն, իսկ դրամաշնորհատուն պետք է տեղեկացվի այցից առնվազն 3 օր առաջ:

10.2 Այցերի արդյունքները կփաստաթղթավորվեն այցելությունների/մոնիտորինգի հաշվետվությունում, որտեղ նշվում է ԱԶԴ-ին կամ ստորագրված դրամաշնորհային պայմանագրի պահանջներին համապատասխանության կամ անհամապատասխանության արդյունքները: ԱԶԴ-ի պահանջներին դրամաշնորհատուի գործողությունների անհամապատասխանության դեպքում, կկիրառվեն Պայմանագրով նախատեսված գործողությունները: Այն դեպքում, երբ Դրամաշնորհատուն չի կատարում ստանձնած պարտավորությունները ԻԳ-ին իրավունք է վերապահվում դադարեցնել պայմանագիրը:

10.3 Ծրագրի իրականացման գործընթացը ենթակա է նաև ՊՄ-ի նախաձեռնությամբ արտաքին մոնիտորինգի և գնահատման:

11. ԳՆՈՒՄՆԵՐ

Շահառուների կողմից ապրանքների/ծառայությունների/աշխատանքների գնումները կարող է իրականացվել իրենց ներքին ընթացակարգերին համապատասխան: Այնուամենայնիվ, գնումների հետ առնչվող բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն Համաշխարհային բանկ:

12. ԳԱՂՏԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՒՍԱՓՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱՆՈՒՄԻՑ

12.1 Շահերի բախումը մեկնաբանվում է, բայց ոչ մի կերպ չի սահմանափակվում հետևյալով. ցանկացած անցյալ, ներկա կամ հետագա տնտեսական, ֆինանսական և մասնավոր ուղղակի և (կամ) անուղղակի (հարազատների կամ գործընկերների միջոցով) հետաքրքրություն, ինչպես նաև սեփականության կամ այլ կապեր ԻԳ-ի, ՊՄ-ի աշխատակազմի, ինչպես նաև ԱԶԴ ծրագրերով ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի Գնահատման հանձնաժողովի անդամների հետ:

Ակնկալվում է, որը վերը նշված աշխատակազմը և անդամները բոլոր ժամանակներում հավատարիմ կմնան ամենաբարձր էթիկայի չափանիշներին:

Եթե վերը նշված կազմակերպությունների անձնակազմի ցանկացած անդամ ուղղակիորեն և/կամ անուղղակիորեն (հարազատների կամ գործընկերների միջոցով) ունի տնտեսական, ֆինանսական և/կամ մասնավոր հետաքրքրություն, ցանկացած կազմակերպությունում (ներառյալ ապրանքների կամ ծառայությունների մատակարար), որի հետ կապի մեջ է Դրամաշնորհատուն, կամ ցանկանում է կապ հաստատել, ապա այդպիսի կապի վերաբերյալ անձնակազմի անդամը պետք է գրավոր կերպով տեղեկացնի ԻԳ-ի կամ ԱԽՈՇ Ծրագրի ղեկավարին, միաժամանակ այդ ծանուցման պատճենն ուղարկելով այն խարդախություն,

վատնում կամ չարաշահման գործողություն կատարած անձին: Շահերի բախում ունեցող անձինք պետք է հրաժարվեն իրենց կողմից կոնֆլիկտի առիթ հանդիսացող գործարքներին վերաբերող որոշումների կայացմանը մասնակցությունից:

12.2 Բոլոր կազմակերպիչները, տեխնիկական փորձագետները և մրցույթի գնահատման հանձնաժողովը, ում հասանելի է Հայտերի փաթեթը և բիզնես պլանները, ստորագրում են գաղտնիության հայտարարագիր, որի ստորությունը Մրցույթի հաղթողի հրապարակային հայտարարությունից հետո1 տարի է: Չբացահայտման մասին համաձայնագրի նմուշը կցված է որպես Հավելված 12:

12.3 ԻԳ-ն կգործադրի համապատասխան ջանքեր՝ ապահովելով, որ մասնակից բոլոր կազմակերպությունները պահպանեն գաղափարների և մտավոր սեփականության նկատմամբ իրենց իրավունքները: ԻԳ-ն պարտավորվում է Գնահատող հանձնաժողովից կամ փորձագետների խմբից բացի հայտերը չփոխանցել որևէ այլ կողմի, ոչ մրցույթից առաջ ոչ էլ դրանց հետո: Այնուամենայնիվ, մասնակիցների պարտականությունն է համարվում ապահովել, որպեսզի գործարար առաջարկներում ներառված չլինի մտավոր սեփականության գաղտնի տեղեկատվություն:

13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ընկերության պաշտոնական ձևաթղթի վրա

Հավելված 1. Դիմում-հայտարարագիր

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին
Մեք Մկրտչյան 5ա.
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 12 54 16 45

Հարգելի _____,

Սույնով, ի դեմս _____ ներկայացնում ենք հայտ՝
իրավաբանական անձի կամ անձանց անունից(ներից)
«Արտահանողի զարգացման դրամաշնորհներ» ծրագրի շրջանակներում
հայտարարված առաջարկների մրցույթին և հայտնում ենք, որ մենք՝

- սույն հայտը ներկայացնում ենք **(անհատական հիմունքներով)** կամ **(որպես կոնսորցիումի անդամ)**, որի համակարգողն է _____
համակարգողի անվանումը
- անմիջականորեն պատասխանատու ենք Ծրագրի նախապատրաստման, իրականացման և կառավարման համար՝ հանդես չգալով որպես միջնորդ.
- չենք գտնվում ԱԶԴ Ուղեցույցի իրավասության 5.2. կետում նշված որևէ իրավիճակում, ինչը կարող է բացառել մեր մասնակցությունը սույն մրցույթին: Ավելին, մենք գիտակցում ենք, որ կեղծ հայտարարության, էական սխալների կամ խախտում թույլ տալու կամ խարդախություն գործելու դեպքում մենք կարող ենք ենթակա լինել դատական վարույթի.
- հաստատում ենք, որ ծանոթացել ենք սույն մրցույթի կանոններին և համաձայն ենք ստանձնել սահմանված պարտավորությունները:

Իրավաբանական անձի կամ անձանց անունները (Կոնսորցիումի դեպքում).

Տնօրեն.

Ստորագրություն.

Ամսաթիվ.

Հավելված 2: Հայտաձև

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Հայտաձև (պետք է ներկայացվի հայերեն և անգլերեն լեզուներով)

1. Ընդհանուր տեղեկատվություն հայտատու(ներ)ի մասին	
1.1. Հայտատուի անունը (Համակարգողի անունը կոնսորցիումի դեպքում)	
Իրավական կարգավիճակը	
Պետական գրանցման համարը	
ՀՎՀՀ	
Հիմնադրման ամսաթիվը	
Հիմնադիրների անուն(ներ)ը/ազգանուն(ներ)ը և մասնաբաժինները <i>(Կոոպերատիվների առկայության դեպքում խնդրում ենք կցել անդամների ամբողջական ցանկը՝ առանձին փաստաթղթով):</i>	1. _____, _____ % 2. _____, _____ % 3. _____, _____ % 4. _____, _____ %
Սեփականատիրոջ(տերերի) անուն(ներ)ը/ազգանուն(ներ)ը	
Գլխավոր մենեջերի անունը/ազգանունը	
Գլխավոր հաշվապահի անունը/ազգանունը	
Իրավաբանական հասցեն	
Գործունեության հասցե(ներ)	
Կոնտակտային հեռախոսահամար, էլ. հասցե, վեբ-կայք	
Բանկային հաշիվ	
Գործունեության ոլորտը(ները)	
1.2. Համատեղ դիմող հայտատու(ներ)ի անուն/ազգանունը (Կոնսորցիումի անդամներինը, եթե այդպիսիք կան)	
Պետական գրանցման համարը	
ՀՎՀՀ	
Հիմնադրման ամսաթիվը	

<p>Հիմնադիրների անուն(ներ)ը/ազգանուն(ներ)ը և մասնաբաժինները</p> <p><i>(Կոոպերատիվների առկայության դեպքում խնդրում ենք կցել անդամների ամբողջական ցանկը՝ որպես առանձին փաստաթուղթ):</i></p>	<p>1. _____, _____</p> <p>2. _____, _____ %</p> <p>3. _____, _____ %</p> <p>4. _____, _____ %</p>
Գլխավոր մենեջերի անունը/ազգանունը	
Իրավաբանական հասցե	
Գործունեության հասցե(ներ)	
Կոնտակտային հեռախոսահամար, էլ. հասցե	
Ընթացիկ բիզնես գործողությունների համառոտ նկարագրություն	

2.	Հայտատուի գործունեության մասին տեղեկատվություն (կոնսորցիումի դեպքում համակարգողի տեղեկությունները)	
	Շրջանառությունը վերջին երկու տարվա ընթացքում, ՀՀ դրամ	
	Շահույթը (կամ վնասը) վերջին երկու տարվա ընթացքում, ՀՀ դրամ	
	Վերջին երկու տարվա չվճարված պարտքը, ՀՀ դրամ	
	<p>Առկա հիմնական հարմարությունները, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> ▪ շենքեր և շինություններ ▪ սարքավորումներ ▪ այլ ակտիվներ <p>(խնդրում ենք ներառել հիմնական հարմարությունների ներդրումների տարեթիվը, ինչպես նաև այդ ներդրումների համար ամորտիզացիոն մասհանումների ժամանակացույցը)</p>	
	Վերջին երկու տարվա աշխատողների թիվը	
	Վերջին երկու տարվա ընթացքում արտահանման շուկաներում վաճառված, պահեստավորված կամ տեղափոխված ապրանքների ծավալը, մլն. տոննա	
	Վերջին երկու տարվա ընթացքում արտահանման ծավալները, ՀՀ դրամ	
	Արտահանման թիրախային շուկաները, տեսակարար կշիռը ընթացիկ ծավալի մեջ (Շուկա, %)	

	Վերջին երկու տարվա ընթացքում ներքին շուկաներում վաճառված, պահեստավորված կամ տեղափոխված ապրանքների ծավալը, մլն տոն	
	Վերջին երկու տարվա ընթացքում ներքին շուկաներում վաճառված, պահեստավորված կամ տեղափոխված ապրանքների ծավալը, ՀՀ դրամ	
3.	Տեղեկատվություն ԱԶԴ ծրագրի մասին	
	Ծրագրի անվանումը	
	Ծրագրի հիմնական նպատակները	
	Ծրագրի համառոտ նկարագրությունը (առավելագույնը 1 էջ)	
	<u>Ծրագրի հիմնական կատարողական ցուցանիշ(ներ)ը</u>	
	Ծրագրի ակնկալվող արդյունքները	
	Արդյունք 1	
	Արդյունք 2, և այլն	
	Ծրագրի ազդեցությունը (Խնդրում ենք նկարագրել, թե ինչպես է առաջարկվող Ծրագրի իրականացումն ազդում ամբողջ արժեզրթայի վրա մուլտիպլիկատիվ և սիներգիայի ազդեցությունը ՓՄՁ-ների և արժեզրթայի այլ մասնակիցների վրա: (առավելագույնը 0.5 էջ)	
	<u>Ծրագրի գործողությունները/ներդրումները</u> (խնդրում ենք ընտրել բոլոր կիրառելի պատասխանները)	<input type="checkbox"/> Մեծածախ շուկայի մեխանիզմ <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Մեծածախ շուկայի ֆիզիկական տարածք <input type="checkbox"/> Մեծածախ շուկայի գործառնություններ <input type="checkbox"/> Համատեղ վերամշակման հարմարություններ <input type="checkbox"/> Հավաքման կետեր <input type="checkbox"/> Պահեստներ <input type="checkbox"/> Տրանսպորտային և լոգիստիկ ծառայություններ և հարմարանքներ <input type="checkbox"/> Մառնարանային տնտեսություններ և լոգիստիկ ծառայություններ <input type="checkbox"/> Ապրանքանիշի ձևավորում և դիզայն, փաթեթավորում և պիտակավորում <input type="checkbox"/> Մատակարարների զարգացման ծրագիր <input type="checkbox"/> Առևտրականների, վերամշակողների և/կամ շուկաների հետ ուղղակի կապի հաստատում <input type="checkbox"/> Տեխնոլոգիական հարթակներ, որոնք օժանդակում են մեծածախ շուկայի համակարգերի դյուրինացմանը <input type="checkbox"/> Տեխնոլոգիական փոխանցման կենտրոններ <input type="checkbox"/> Ռեսուրսների համատեղ օգտագործման կենտրոններ

	<u>Ծրագրի նորարարությունը</u> (նկարագրեք, թե ինչու է առաջարկվող Ծրագիրը համարվում Հայաստանի համար նորարարական (առավելագույնը 0.5 էջ))	
	Ծրագրի ընդհանուր բյուջեն (ՀՀ դրամ)	
	Հայցվող դրամաշնորհի գումարը (ՀՀ դրամ, %)	
	Ընկերության համաֆինանսավորման ներդրումը (ՀՀ դրամ, %)	
	Դրամաշնորհային միջոցների օգտագործման հիմնական ուղղությունները (խնդրում ենք նկարագրել միջոցների կոնկրետ օգտագործումը (առավելագույնը 0.5 էջ))	
	Հայտատուի համաֆինանսավորման գումարի օգտագործման հիմնական ուղղությունները	
	Ոչ դրամական ներդրումները (առկայության դեպքում)	
	Ծրագրի իրականացման ենթադրյալ սկիզբը (ամիս, տարի)	
	Ծրագրի իրականացման ենթադրյալ ավարտը (ամիս, տարի)	

Հավելված 3: Համաֆինանսավորում տրամադրելու մասին հայտարարագիր

**ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ
Ներկայացվում է Արտահանողի զարգացման դրամաշնորհների Ծրագրի համար**

Երևան

«_____» _____ 2019

Ես, _____
/Անուն, ազգանուն/անձնագրի համար/տրված ում կողմից/երբ/հասցե/
հանդիսանալով _____ տնօրեն/(համակարգող
ընկերության անվանումը

կոնսորցիումի ղեկավար) սույնով հայտարարում եմ, որ եթե մեր _____ ՀՀ դրամ
գնահատված արժեքով հայտի ֆինանսավորումը «Արտահանողի զարգացման
դրամաշնորհների» հաստատվի, ապա մենք պատրաստ ենք համաֆինանսավորել Ծրագիրը,
...%-ով, _____ ՀՀԴ գումարի չափով:

Կից՝

- Հայտատու(ներ)ի ընկերության վերջին 6 ամիսների բանկային քաղվածքները, որոնք
ապացուցում են իրենց հաշիվներում համաֆինանսավորման համապատասխան
գումարի առկայությունը,
- սեփականատիրոջ բանկային հաշվի բանկային քաղվածք՝ համապատասխան
ֆինանսական ռեսուրսների առկայության վերաբերյալ,
- վարկային միջոցների հասանելիությունը հաստատող բանկային տեղեկանք:

(Խնդրում ենք նշել համապատասխան վանդակը)

Անուն, Ազգանուն

Ստորագրություն

Հավելված 4. Բիզնես մոդելի ձևանմուշ

Ներածություն

- Ո՞րն է ձեր կողմից առաջարկվող հիմնական բիզնես մոդելը:
- Որո՞նք են մատուցվող առաջնային և երկրորդային ծառայությունները:
- Ովքե՞ր են առաջնային և երկրորդային հաճախորդները:

Շուկայի և մրցակիցների վերլուծություն

- Ովքե՞ր են շուկայում խոշոր գնորդները:
- Ի՞նչ հաճախորդների եք փորձում հասնել:
- Ովքե՞ր են հիմնական մրցակիցները, ի՞նչ ծառայություններ են նրանք մատուցում:
- Ի՞նչ բացեր եք լրացնում շուկայում:

Աճի ռազմավարություն և իրականացման պլանը

- Որքա՞ն է մատուցվող ծառայության առկա մասշտաբը:
- Ո՞րն է ընկերության առաջիկա 5-10 տարիների աճի ռազմավարությունը:
- Իրականացման պլանը (Գանտի աղյուսակ):

Շահառուների/Ֆերմերների ռազմավարությունը

- Քանի՞ շահառուների/ֆերմերների եք պլանավորում հասնել:
- Որտե՞ղ են գտնվում այդ շահառուները/ֆերմերները:
- Ո՞րն է գործող և նոր շահառուներին/ֆերմերներին ներգրավելու ռազմավարությունը.
 - Ի՞նչ տեսակի հարմարություններ են պահանջվում, արդյո՞ք բիզնեսն ունի այդ հարմարությունները:
 - Ինչպե՞ս է այս նախագիծն աջակցում այդ ռազմավարությունների իրագործմանը:

Մարքեթինգային ռազմավարություն (պլանավորում, անհրաժեշտության դեպքում գնորդներին, մեծածախ վաճառողներին և առևտրականներին ներգրավելու համար):

- Ինչպիսի՞ հաճախորդներ եք թիրախավորում (տեղական ընդդեմ օտարերկրյա): Խնդրում ենք տրամադրել հատուկ մանրամասներ, ներառյալ երկրները, վայրերը, գործընկերները:
- Ձեր բիզնեսի քանի՞ տոկոսն է թիրախավորում տվյալ հաճախորդների շուկայի յուրաքանչյուր տեսակին:
- Ո՞րն է առկա և նոր սպառողական շուկաներ դուրս գալու ռազմավարությունը:

- Ինչպիսի՞ հարմարություններ են անհրաժեշտ: Բիզնեսն ունի՞ արդյոք այդ հարմարությունները:
- Ինչպե՞ս է այս Ծրագիրն աջակցում այդ ռազմավարությունների ընդլայնմանը:

Կազմակերպության կառուցվածքը և հնարավորությունները

- Ո՞րն է ընկերության կառուցվածքը:
- Ո՞վ է հիմնական ղեկավարությունը և կառավարող թիմը:
- Ո՞րն է կազմակերպության կառուցվածքը բիզնեսի համար: Որո՞նք են հիմնական կատարողականի ցուցանիշները (ՀԿՑ): Որքա՞ն հաճախ են գնահատվում այս ՀԿՑ-ները:
- Ի՞նչ տեխնիկական հնարավորություններ ունի կազմակերպությունը բիզնեսն իրականացնելու համար:
- Ինչպե՞ս է ծրագիրն ազդում կազմակերպության կառուցվածքի և պահանջվող հնարավորությունների վրա:

Գործընկերություն (եթե կոնսորցիումի մաս է)

- Ի՞նչ տիպի համագործակցություն է կիրառում ձեր բիզնեսը:
- Ովքե՞ր են ծրագրի կոնսորցիումի գործընկերները:
- Ի՞նչ հնարավորություններ են բերում նախագծին կոնսորցիումի գործընկերները:
- Ո՞րն է կոնսորցիումի գործընկերների համագործակցության պլանը:

Տիմանսական իրագործելիություն և պլանավորում

- Որո՞նք են եկամտի առաջնային և երկրորդային աղբյուրները:
- Որո՞նք են եկամուտների և ծախսերի կանխատեսումները:
- Ո՞րն է շահույթի և վնասի վերլուծությունը:
- Ո՞րն է կանխատեսվող կանխիկ դրամի հոսքը:
- Ո՞րն է ներդրման վերադարձը:
- Ինչպե՞ս է տվյալ Ծրագիրն (դրամաշնորհին ներկայացված) ազդում բիզնեսի համար նախատեսված ներդրումների վերադարձի վրա:
- Որքա՞ն է բիզնեսի առկա պարտքը և վարկունակությունը:

Ռիսկերի կառավարման և դրանց թողած հետևանքների մեղմացման պլան

- Որո՞նք են բիզնեսի հիմնական ռիսկերը (մեծածախ շուկայի համակարգի բոլոր փուլերում):
- Ինչպե՞ս է առաջարկվող նախագիծը աջակցում կամ մեծացնում հայտնաբերված ռիսկերը:
- Որո՞նք են հայտնաբերված ռիսկերի մեղմացման առաջարկվող միջոցները:

Հավելված 5. Ծրագրի բյուջե*

/ՀՀ դրամ/

	Ցուրաքանչյուր առարկայի մանրամասն նկարագրություն	Միավոր	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գումարը	Ֆինանսավորման աղբյուրները		Ընդհանուր թիրախային ֆինանսավորման համամասնությունը (%)
						ԱԶԴ	Համաֆինանսավորում	
1	Փոքր վերակառուցում և վերանորոգում**							
	(խնդրում ենք ներկայացրեք մանրամասն բացվածք)							
2	Սարքավորումներ և նյութեր							
	(խնդրում ենք ներկայացրեք մանրամասն բացվածք)							
3	Հումք							
	(խնդրում ենք ներկայացրեք մանրամասն բացվածք)							
4	Որակի կառավարման համակարգերի ներդրում և սերտիֆիկացում							
	(խնդրում ենք ներկայացրեք մանրամասն բացվածք)							
5	Այլ վավեր ծախսեր *** (շուկայի մուտքի/ արտաքին ընդլայնման ռազմավարությունների մշակում, ընկերության համար արտասահմանյան շուկայի ուսումնասիրություն և գովազդային արշավներ, և այլն):							
	(խնդրում ենք ներկայացրեք մանրամասն բացվածք)							
6	Հարկեր****							
	Ընդհանուր							

* Բյուջեի հիմնական տողերում առավելագույնը 15% փոփոխությունները թույլատրվում են Իրականացնող գործակալության գրավոր թույլտվությամբ

** Այս ծախսերը չեն կարող գերազանցել ընդհանուր դրամաշնորհային միջոցների 10% -ը

*** Այս ծախսերը չեն կարող գերազանցել ընդհանուր դրամաշնորհային միջոցների 20% -ը

**** Չեն կարող դիտարկվել համաֆինանսավորման մասով:

Հավելված 6. Վճարման պահանջագիր

< Վճարման պահանջագրի ամսաթիվը >

< Իրականացնող գործակալության անվանումը
և հասցեն >

Դրամաշնորհային պայմանագրի համարը.

Ծրագրի անվանումը.

Իրավաբանական անձի անվանումը և հասցեն (Համակարգողինը՝ կոնսորցիումի դեպքում).

Վճարման պահանջագրի համարը.

Վճարման պահանջագրով ծածկվող ժամանակահատվածը.

Հարգելի պարոն/տիկին,

Ես սույնով ինդրում եմ [կանխավճարի վճարում] [մնացորդի վճարում] վերը նշված պայմանագրի շրջանակներում:

Հայցվող գումարը <պայմանագրում նշված տարբերակի համաձայն / հետևյալը. ...>.

Կից կարող եք գտնել հետևյալ օժանդակ փաստաթղթերը.

- ✓ միջանկյալ/վերջնական նկարագրողական հաշվետվություն
- ✓ միջանկյալ/վերջնական Ֆինանսական հաշվետվություն և ծախսերի մանրամասն ցուցակ օժանդակող փաստաթղթերով

Փոխանցումը պետք է կատարվի հետևյալ բանկային հաշվին. <տվեք Պայմանագրում ներկայացված Ծրագրի հատուկ հաշվեհամարը>

Հավաստիություն.

Սույնով հաստատում եմ, որ սույն վճարման պահանջագրով ներկայացվող տեղեկատվությունը ամբողջական է, հուսալի և ճշգրիտ: Սույնով հաստատում եմ, որ հայտարարագրված ծախսերը կատարվել են սույն Պայմանագրին համապատասխան, և կարող են համարվել իրավասու:

Հարգանքով՝

< Ստորագրություն >

Հավելված 7. Միջանկյալ/վերջնական նկարագրողական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԿԱՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Ստորև ներկայացված տեղեկատվությունը պետք է համապատասխանի ֆինանսական հաշվետվությունում ներկայացված ֆինանսական տեղեկատվությանը:
- Իրականացնող գործակալությունը մերժում է թերի կամ անավարտ հաշվետվությունները:
- Բոլոր հարցերի պատասխանները պետք է ներառվեն հաշվետու ժամանակահատվածը, ինչպես նշված է 1.6 կետում:

Բովանդակություն

Հաշվետվության մեջ կիրառվող հասցավումների ցանկ

1. Նկարագրություն

Ծրագրի անվանումը			
Պայմանագրի համարը			
Կոնտակտային անձի անունը և պաշտոնը			
Իրավաբանական անձի անվանումը (Համակարգողը կոնսորցիումի ղեկավար) (ցանկացած այլ անդամներ, եթե այդպիսիք կան)	Մարզ		
	Գտնվելու վայրը		
Հաշվետու ժամանակահատված	օր/ամիս/տարի - օր/ամիս/տարի		
Ծրագրի բյուջեն	Դրամաշնորհների ընդհանուր գումարները	% ՀՀ դրամ	Ծրագրի համաֆինանսավորման գումարը

	Ընթացիկ տրանշի գումարը	% ՀՀ դրամ	% ՀՀ դրամ
Գլխավոր մենեջերի/տնօրենի ստորագրությունը օր/ամիս/տարի			

<Միջանկյալ հաշվետվությունը պետք է բաղկացած լինի առավելագույնը 5 էջից և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը

2. Ծրագրի իրականացման գնահատում

2.1. Ծրագրի իրականացման համառոտ նկարագիր

Խնդրում ենք համառոտ ակնարկ ներկայացնել Ծրագրի իրականացման հաշվետու ժամանակահատվածի համար (ոչ ավելի, քան 1/2 էջ):

2.2. Արդյունքներ և գործողություններ

Ա. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ինչպե՞ս էք գնահատում մինչ այժմ ձեռքբերված արդյունքները: Ներառեք ելքային, արդյունքային և ազդեցության (output, outcome, impact) կատարման և ձեռքբերումների վերաբերյալ դիտարկումներ և արդյոք Ծրագիրն ունեցել է անկանխատեսելի դրական կամ բացասական արդյունքներ: Նախատեսված արդյունքներին չհասնելու դեպքում պետք է ներկայացվեն և վերլուծվեն պատճառները, և պետք է առաջարկվեն խնդիրների հաղթահարմանն ուղղված գործողություններ:

<Արդյունքների վերը նշված գնահատումից հետո, խնդրում ենք նկարագրել իրականացված բոլոր գործողությունները >

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն 1.

<խնդրում ենք նկարագրել իրականացման գործընթացը և բացատրել ցանկացած խնդիր (օրինակ՝ ուշացում, չեղարկում, հետաձգում) որոնք առաջացել են, և ինչպես են դրանք լուծվել > (եթե կիրառելի է)

< խնդրում ենք թվարկեք այն ռիսկերը, որոնք կարող են վտանգել որոշ գործողությունների իրականացումը և բացատրեք, թե ինչպես են դրանք լուծվել > (եթե կիրառելի է)

Գործողություն 2.

<...>

Գ. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Խնդրում ենք տրամադրել գործողությունների թարմացված ժամանակացույցը՝ ծրագրի հետագա ժամանակահատվածի համար²

Տարի													
Գործողություն	Ամիս1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Իրականացնող մարմին
<i>Օրինակ</i>	<i>օրինակ</i>												<i>Օրինակ</i>
Նախապատրաստական գործողություն 1 (անվանում)													Համակարգող կամ գործընկեր 1
Կատարվող գործողություն 1 (անվանում)													Համակարգող կամ գործընկեր

² Այս պլանը կներառի ֆինանսական ժամանակահատվածը՝ միջանկյալ և հաջորդ հաշվետվությունների միջև:

ՎԵՐՁՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Ստորև բերված տեղեկատվությունը պետք է համապատասխանի ֆինանսական հաշվետվություններին, որոնք ներկայացված են վերջնական ֆինանսական հաշվետվությունում:
- Իրականացնող գործակալությունը մերժում է թերի կամ անավարտ հաշվետվությունները:
- Բոլոր հարցերի պատասխանները պետք է ներառեն հաշվետու ժամանակաշրջանը, ինչպես նշված է 1.6 կետում:

Բովանդակություն

Հաշվետվության մեջ կիրառվող հասպտվումների ցուցակ

3. Նկարագրություն

Ծրագրի անվանումը			
Պայմանագրի համարը			
Կոնտակտային անձի անունը և պաշտոնը			
Դրամաշնորհային պայմանագրի համակարգողի անունը (և այլ անդամներինը, եթե այդպիսիք կան)		Մարզ	
		Գտնվելու վայրը	
Հաշվետվության ժամանակահատված	օր/ամիս/տարի - օր/ամիս/տարի		
Ծրագրի բյուջեն	Դրամաշնորհների ընդհանուր ֆոնդերը	ՀՀ դրամ, %	Ծրագրի համաֆինանսավորման գումարը ՀՀ դրամ, %
	Ընթացիկ տրանշի գումարը	ՀՀ դրամ, %	
Գլխավոր մենեջերի/տնօրենի ստորագրությունը օր/ամիս/տարի			

<Վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի առավելագույնը 10 էջ և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը >

4. Ծրագրի իրականացման գնահատում

4.1. Ծրագրի իրականացման համառոտ նկարագիր

Խնդրում ենք տրամադրել Ծրագրի իրականացման համապարփակ ակնարկ՝ արդյունքների, ձեռքբերումների և ազդեցության մասին (ոչ ավել, քան 1 էջ):

4.2. Արդյունքներ և գործողություններ

Ա. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ինչպե՞ս եք գնահատում Ծրագրի մինչ այժմ ձեռքբերված արդյունքները: Ներառեք դիտարկումներ էլքային, արդյունքային և ազդեցության ցուցանիշների (aoutput, aoutcome, impact) կատարման և ձեռքբերումների վերաբերյալ և արդյոք Ծրագիրն ունեցել է անկանխատեսելի դրական կամ բացասական արդյունքներ: Նախատեսված արդյունքներին չհասնելու դեպքում պետք է ներկայացվեն և վերլուծվեն պատճառները, և պետք է առաջարկվեն խնդիրների հաղթահարմանն ուղղված գործողություններ:

<Արդյունքների վերը նշված գնահատումից հետո խնդրում ենք նկարագրել իրականացված բոլոր գործողությունները >

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն 1.

<Խնդրում ենք նկարագրել իրականացման գործընթացը և բացատրել այն խնդիրները (օրինակ՝ ուշացում, չեղարկում, հետաձգում) որոնք առաջացել են, և ինչպես են դրանք լուծվել > (եթե կիրառելի է)

< Խնդրում ենք թվարկեք այն ռիսկերը, որոնք կարող էին վտանգել որոշ գործողությունների իրականացումը և բացատրեք, թե ինչպես են դրանք լուծվել > (եթե կիրառելի է)

Գործողություն 2.

<...>

Գ. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Խնդրում ենք տրամադրել կատարված գործողությունների թարմացված ժամանակացույցը³

Տարի													
Գործողություն	Ամիս1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Իրականացնող մարմին
Օրինակ	օրինակ												Օրինակ

³ Այս ժամանակացույցը պետք է ներառի միջանկյալ և հաջորդ հաշվետվությունների միջև ընկած ֆինանսական ժամանակահատվածը:

Հավելված 8. Միջանկյալ/վերջնական ֆինանսական հաշվետվություն (տես՝ կից excel աղյուսակ)

Հավելված 9. Ծախսերի մանրամասն ցուցակ (տես՝ կից excel փաստաթուղթը)

**Հավելված 10. Ապրանքների և ծառայությունների «Բացառված ծախսերի»
Համաշխարհային բանկի ցանկը**

«Բացառված ծախսեր» նշանակում է ցանկացած ծախս.

- (ա) պայմանագրով նախատեսված ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք ֆինանսավորվել են կամ համաձայնեցվել են ֆինանսավորման ցանկացած ազգային կամ միջազգային ֆինանսավորող հաստատության կամ գործակալության կողմից, բացառությամբ Բանկի կամ Ասոցիացիայի, ֆինանսավորել կամ համաձայնել են ֆինանսավորել, կամ որը Բանկը կամ Ասոցիացիան ֆինանսավորել կամ պայմանավորվել են ֆինանսավորել մեկ այլ վարկային, փոխառության կամ դրամաշնորհի ներքո,
- (բ) Միացյալ Ազգերի վիճակագրական փաստաթղթերում հրապարակված No. 34/Rev.3 (1986) (SITC) Միջազգային Առևտրի Ստանդարտ Դասակարգման (SITC, Rev.3) հետևյալ խմբում կամ ենթախմբերում ընդգրկված ապրանքները, որոնք սահմանված են Բանկի կողմից և ծանուցվել են Վարկառուին: SITC-ի հետագա փոփոխությունները նույնպես կներառվեն սույն ցանկում:

Խումբ	Ենթախումբ	Ապրանքի նկարագրություն
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Ծխախոտ, չմշակված, ծխախոտի թափոն
122		Ծխախոտ, արտադրված (ծխախոտի փոխարինողներ պարունակող կամ չպարունակող)
525		Ռադիոակտիվ և հարակից նյութեր
718	718.7	Միջուկային ռեակտորներ և դրանց մասեր. վառելիքի տարրեր (փամփուշտներ), չլուսավորված, միջուկային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտ վերամշակող սարքավորումներ
971		Ոսկի, ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարի և խտանյութերի)

- (գ) ապրանքների համար, որոնք ունեն ռազմական կամ զինվորական նշանակություն կամ նախատեսված են շքեղ սպառման համար,
- (դ) Էկոլոգիապես վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներմուծումը արգելվում է Վարկառուի համար նախատեսված օրենքներով կամ միջազգային համաձայնագրերով, ուր Վարկառուն հանդիսանում է կողմերից մեկը, և ցանկացած այլ ապրանք, որը նախագծված է որպես Էկոլոգիապես վտանգավոր Վարկառուի և Բանկի միջև համաձայնագրով: Որոշակի գործողություններում Բանկը համաձայնության

է գալից Վարկառուի հետ բնապահպանական հիմունքներով ֆինանսավորումը բացառող նյութերի վերաբերյալ, (օրինակ՝ նշված թունաքիմիկատների բացառում). Փակագծում բերված կետը պետք է ներառվի միայն այն դեպքում, եթե Վարկառուի և Բանկի միջև համաձայնություն ձեռք բերվի այս վարկի նպատակներով էկոլոգիապես վտանգավոր նշանակություն ունեցող ապրանքների ցանկի վերաբերյալ, որը ձեռք է բերվել և արձանագրվել բանակցությունների ժամանակ կամ լրացուցիչ նամակով):

- (ե) Միացյալ Ազգերի Անվտանգության խորհրդի որոշմամբ արգելված ցանկացած վճարման հաշիվ, որն ընդունվել է Միացյալ Ազգերի Կանոնադրության VII գլխում և
- (զ) որի հետ կապված բանկը որոշում է դրա կոռումպացված, խարդախ լինելը, Վարկառուի ներկայացուցիչների կամ Վարկի հասույթի այլ ստացողների կողմից դավադրանք կամ հարկադրանքի փորձեր են կատարվել, առանց Վարկառուի (կամ այդպիսի այլ ստացողի) Բանկի համար ժամանակին և պատշաճ գործողություն ձեռնարկել՝ այդպիսի գործելակերպերը վերացնելու համար:

Հավելված 11. Փոճագետների, գնահատող հանձնաժողովի անդամների և հայտերի գնահատման և Ծրագրերի իրականացման արդյունքների գնահատման աշխատանքներին masnacic այլ անձանց համար.

Գաղտնիության և շահերի բախումներից խուսափման հայտարարության նմուշ

Ներկայացվում է՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ,
Արտահանողների զարգացման դրամաշնորհների մրցույթ

Հարգելի պարոն/տիկին,

Ես ցանկանում եմ մասնակցել և աջակցել «Արտահանողների զարգացման դրամաշնորհների» մրցույթին (Մրցույթ):

Ես գիտակցում եմ, որ Մրցույթին մասնակցելու ընթացքում ինձ կարող են հասանելի լինել յուրաքանչյուր մասնակցի Հայտերի փաթեթները («Ծրագրեր») և եզրափակիչ փուլի մասնակիցների ամբողջ գործարար ծրագրերը (հավաքականորեն՝ «Պլաններ»): Այդ Պլանները կարող են պարունակել մտավոր սեփականության իրավունքներ, Մրցույթի մասնակիցների գյուտեր և հասկացություններ (հավաքականորեն՝ «Գաղափարներ»): Ես գիտակցում եմ, որ բոլոր այս մասնակից թիմերի մտավոր և սեփականության այլ իրավունքները Մրցույթին մասնակցելու արդյունքում կմնան անփոփոխ: Ես նաև գիտակցում եմ, որ այս գաղափարներից որոշները կարող են ունենալ առևտրային գաղտնիքներ և մասնակիցները գուցե դեռ չեն ձեռնարկել համապատասխան քայլեր՝ արտոնագրելու, հեղինակային իրավունքի պաշտպանությանը կամ այլ կերպ պաշտպանելու իրենց Ծրագրերը կամ Գաղափարները:

Հաշվի առնելով իմ մասնակցությունը Մրցույթին, ես համաձայնվում եմ ի օգուտ ԻԳ-ին և Մրցույթի մասնակիցներին, որ ես անձամբ կստուգեմ Մրցույթին ներկայացված Հայտերն ու ծրագրերը և որ ջանքեր կգործադրեմ Հայտերը Ծրագրերի և գաղափարների գաղտնիությունը պահելու համար, որոնք ես կարող եմ ստանալ Մրցույթի ընթացքում, և որ ես չեմ պատճենի, այլոց առջև չեմ բացահայտի նման Հայտերը, Ծրագրերը կամ Գաղափարները, և որ ես չեմ օգտագործի որևէ Հայտ, Ծրագիր կամ Գաղափար իմ կամ ինձ հետ կապված այլ անձի, կամ իրավաբանական անձի շահերի համար: Ես կվերադարձնեմ Հայտերն ու Ծրագրերը մասնակիցներին Մրցույթի կազմակերպիչների միջոցով:

Վերը նշված սահմանափակումները չեն վերաբերի այն Հայտերին, Պլաններին կամ Գաղափարներին, որոնք հրապարակման պահին հանրությանը հայտնի են դառնում ոչ իմ գործողությունների պատճառով, ինձ հայտնի է հրապարակման պահին կամ ինքնուրույն մշակված է իմ կողմից, կիրառվում կամ հրապարակվում է մասնակիցների թույլտվությամբ, տրամադրվում է երրորդ կողմին՝ առանց երրորդ կողմի համար նման իրավունքների սահմանափակումների, ես ստանում եմ երրորդ անձի կողմից, որն օրինական իրավունք ունի այն ինձ փոխանցել, և որի նկատմամբ ես գաղտնիության պատասխանատվություն չեմ կրում, կամ հրապարակումն իրականացվում է համաձայն պետական գործակալության թույլտվության:

Բացի այդ, ես տեղյակ չեմ որևէ Հայտի հետ շահերի բախման մասին և Հայտն ուսումնասիրելու ընթացքում ակնհայտ է դառնում, որ եթե ես բացահայտեմ որևէ շահերի բախման երևույթ, դրա մասին կտեղեկացնեմ ԻԳ-ին և այդ գործողությունների հետագա ընթացքը կթողնեմ ԻԳ-ի կամ այլ պատասխանատու վերահսկող մարմինների որոշմանը:

Վերոնշյալ սահմանափակումները կկիրառվեն Մրցույթի անցկացման և հաղթողներին հրապարակայնորեն հայտարարելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Ես համաձայն եմ պատասխանատվություն կրել մասնակիցներին (որևէ մասնակցի) կամ նրանց անդամներին (ցանկացած անդամի) պատճառված վնասների համար, որոնք առաջացել են սույն Հայտարարության մեջ նշված իմ կողմից սահմանափակումների խախտմամբ:

Ես ուրախ եմ աջակցել Մրցույթին և դրանում իմ ներգրավվածության ընթացքում պատրաստ եմ պահպանել այնպիսի այլ կանոններ և սկզբունքներ ևս, որոնք կարող են ողջամտորեն պարտադրվել ԻԳ-ի կողմից:

Հարգանքով՝

Ստորագրություն _____

Անուն _____